
ԵԹԵ ԱՆԳԱՄ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԸՆԴԱՄԵՆԸ ՀԻՆԳ ՄԵՂՔ ԳՈՐԾԵՍ...
...ՄԵԿ ՏԱՐՈՒՄ ԿՍՏԱՑՎԻ 1.825 ՄԵՂՔ։ ԵԹԵ ԱՊՐԵՍ ՅՈԹԱՆԱՍՈՒՆ ՏԱՐԻ, ԱՊԱ ԱՍՏԾՈ ՕՐԵՆՔԸ ԽԱԽՏԱԾ ԿԼԻՆԵՍ **127.000 ԱՆԳԱՄ։**
ԴՈՒ ՊԵՏՔ Է ՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՍ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ, ԵՐԲ «ՄԵԶԱՆԻՑ ԱՄԵՆ ՄԵԿՆ ԻՐ ՀԱՄԱՐ ԱՍՏԾՈՒՆ ՊԵՏՔ Է ՀԱՇԻՎ ՏԱ» (ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻՆ 14:12)։
ԲԱՅՑ ՄԻԹԵ՞ ԱՍՏՎԱԾ ՊԱՐԶԱՊԵՍ ՉԻ ՆԵՐԻ ԻՆՁ։
ԵՍ ԳԻՏԵՄ, ՈՐ ԽԱԽՏՈՒՄ ԵՄ ՕՐԵՆՔԸ։ ԲԱՅՑ ՄԻԳՈՒՑԵ ԱՅՆ ՈՒՂՂԱԿԻ ՄԻ ԿՈ՞ՂՄ ԴՆԵՆՔ։
ՓՈՐՁԻՐ ԴԱ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ...
ՄԻԱՅՆ ԿԱՇԱՌԱԿԵՐ ԴԱՏԱՎՈՐԸ ԿԱՆԻ ԴԱ։ ԲԱՅՑ **ԱՐԴԱՐԸ** ԿԱՍԻ...
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է, ՈՐ ՎՃԱՐԵՍ ՔՈ ՀԱՆՑԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ։
ԱՍՏՎԱԾ **ՍՈՒՐԲ ԵՎ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՎՈՐ Է։** ՆԱ ԱՏՈՒՄ Է ՄԵՂՔԸ։ ՀԻՍՈՒՍԸ ԶԳՈՒՇԱՑՐԵԼ Է, ՈՐ ԱՍՏՎԱԾ ԻՐ ԲԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԲՈԼՈՐ ՄԵՂԱՎՈՐՆԵՐԻՆ ԳՑԵԼՈՒ Է ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՐԱԿԻ ՄԵՋ, «ՈՐՏԵՂ ԿԼԻՆԻ ԼԱՑ ԵՎ ԱՏԱՄՆԵՐԻ ԿՐՃՏՈՑ»։ (ՄԱՏԹԵՈՍ 13:42)
**Օ՛, ՈՉ**
ԱՅԴ ԴԵՊՔՈՒՄ ԻՆՉՊԵ՞Ս **ՈՐԵՎԷ ՄԵԿԸ** ԿԱՐՈՂ Է ՀԱՅՏՆՎԵԼ ԴՐԱԽՏՈՒՄ։
ԿԱ ԸՆԴԱՄԵՆԸ ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ... ԵԹԵ ՄԻ **ԱՆՄԵՂ ՄԱՐԴ** ԻՐ ՎՐԱ ՎԵՐՑՆԻ ՔՈ ՊԱՏԻԺԸ, ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԻ, ԵՎ ԴՈՒ **ԱԶԱՏ ԿԼԻՆԵՍ։**
ԱՍՏՎԱԾ ՔԵԶ ԱՅՆՔԱՆ **ՇԱՏ Է** ՍԻՐՈՒՄ, ՆԱ ԻՐ ՈՐԴԻ ՀԻՍՈՒՍԻՆ ՈՒՂԱՐԿԵՑ, ՈՐ ՉԱՐՉԱՐՎԻ ԵՎ ՄԱՀԱՆԱ ՔՈ ՄԵՂՔԵՐԻ ՀԱՄԱՐ...
...ԱՅՆՈՒՀԵՏԵՎ ՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՎ ՄԵՌԵԼՆԵՐԻՑ՝ ՀԱՂԹԵԼՈՎ ՄԱՀԻՆ։
ԴՈՒ ՉԵՍ ԿԱՐՈՂ ՎԱՍՏԱԿԵԼ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ։ **ԴԱ ԱՍՏԾՈՒ ՆՎԵՐՆ Է** ԲՈԼՈՐ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԽՈՆԱՐՀԵՑՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՆՁԸ ԵՎ ԳԱԼԻՍ ԵՆ ՀԻՍՈՒՍԻՆ։ «ԴԱՐՁԻՐ ԱՍՏԾՈՒՆ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՎԱՏ ՈՒՆԵՑԻՐ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍԻՆ» (ԳՈՐԾ. 20:21)։ ՆԱ ԿՆԵՐԻ ՔՈ ՄԵՂՔԵՐԸ ԵՎ ՔԵԶ ՆՈՐ ՍԻՐՏ ԿՏԱ։ «ԵԹԵ ՄԵԿԸ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵՋ Է, ՆԱ ՆՈՐ ԱՐԱՐԱԾ Է»։ (Բ ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ 5:17)
ՀԻՄԱ ԿԱՐԴԱ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ՀՆԱԶԱՆԴՎԻՐ ԴՐԱՆ։ ԳՏԻՐ ԼԱՎ ԵԿԵՂԵՑԻ, ՈՐՊԵՍԶԻ ՀՈԳԵՎՈՐԱՊԵՍ ԱՃԵՍ։ ԵՎ ՊԱՏՄԻՐ ՈՒՐԻՇՆԵՐԻՆ **ԲԱՐԻ ԼՈՒՐԸ։**
ԱՐԴՅՈ՞Ք ԴՈՒ ԼԱՎ ՄԱՐԴ ԵՍ
ԴԻՄԱՎՈՐԵՔ **ՊՐՆ ԼԱՎ ՄԱՐԴՈՒՆ**։ ԵԹԵ ԼԱՎ ՄԱՐԴԻԿ ԴՐԱԽՏ ԳՆԱՆ, ԱՅԴ ՇԱՐՔՈՒՄ ՆԱ ԿԼԻՆԻ ԱՌԱՋԻՆԸ.
ԴԵ՜... ԵՍ ՓՈՐՁՈՒՄ ԵՄ ԱՆԵԼ ԱՅՆ, ԻՆՉ ՃԻՇՏ Է.
ԱՐԴՅՈ՞Ք ՊԱՀԵԼ ԵՍ ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ.
ԲԱՎԱԿԱՆ ԱՉԱՓ.
ԻՐՈ՞Ք։ ԴԵՄ ՉԵՍ ԼԻՆԻ՞, ԵԹԵ ՍՏՈՒԳԵՆՔ։
ՀՄ... ՇԱՏ ԼԱՎ.
ԵՐԲԵՎԷ ՍՈՒՏ ԽՈՍԵ՞Լ ԵՍ։
ԱՅՈ, ԻՍԿ Ո՞Վ ՉԻ ԽՈՍԵԼ։


Ի՞ՆՉ ԱՆՈՒՆ ԿՏԱՍ ՆՐԱՆ, ՈՎ ՍՏՈՒՄ Է:
ԵՐԲԵՎԷ ՈՐԵՎԷ ԲԱՆ ԳՈՂԱՑԵ՞Լ ԵՍ:
ԲԱՅՑ ՀԵՆՑ ՆՈՐ ԻՆՁ ԱՍԱՑԻՐ, ՈՐ ՍՏԱԽՈՍ ԵՍ:
ՍՏԱԽՈՍ:
Ո՛Չ :
ԴԵ, ԵՐԵԽԱ ԺԱՄԱՆԱԿ ԿՈՆՖԵՏ ԵՄ ԳՈՂԱՑԵԼ:
ԻՍԿ Ի՞ՆՉ ԱՆՈՒՆ ԿՏԱՍ ՆՐԱՆ, ՈՎ ԳՈՂԱՆՈՒՄ Է:
ԳՈՂ:
ԵՐԲԵՎԷ ՈՐԵՎԷ ՄԵԿԻՆ ՑԱՆԿՈՒԹՅԱՄԲ ՆԱՅԵ՞Լ ԵՍ:
ԻՀԱՐԿԵ:
ՀԻՍՈՒՍՆ ԱՍԵԼ Է. «ՈՎ ՑԱՆԿԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ ՆԱՅԻ ՈՐԵՎԷ ԿՆՈՋ, ԱՐԴԵՆ ԻՐ ՍՐՏՈՒՄ ՆՐԱ ՀԵՏ ՇՆԱՑԱԾ ԿԼԻՆԻ»: (ՄԱՏԹԵՈՍ 5:28)
ԵՐԲԵՎԷ ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆԸ ԶՈՒՐ ՏԵՂԸ ԳՈՐԾԱԾԵ՞Լ ԵՍ:
#@*#%! ԴԻՄԱՑԴ ՆԱՅԻՐ, ՏԽՄԱՐ:
ԴԱ ԿՈՉՎՈՒՄ Է ԱՍՏՎԱԾԱՀԱՅՀՈՅՈՒԹՅՈՒՆ: «ՔՈ ՏԵՐ ԱՍՏԾՈ ԱՆՈՒՆԸ ԶՈՒՐ ՏԵՂԸ ԲԵՐԱՆԴ ՉԱՌՆԵՍ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՏԵՐՆ ԻՐ ԱՆՈՒՆԸ ԶՈՒՐ ՏԵՂԸ ԲԵՐԱՆՆ ԱՌՆՈՂԻՆ ԱՆՊԱՏԻԺ ՉԻ ԹՈՂՆԻ»: (ԵԼՔ 20:7)
ՀԱՄԱՁԱՅՆ ՔՈ ԻՍԿ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹՅԱՆ՝ ԴՈՒ ՍՏԱԽՈՍ, ԳՈՂ, ԱՍՏՎԱԾԱՀԱՅՀՈՅՈՂ ԵՎ ՍՐՏՈՒՄ ՇՆԱՑՈՂ ԵՍ: ԵՎ ՍՐԱՆՔ ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԻՑ ԸՆԴԱՄԵՆԸ ՉՈՐՍՆ ԵՆ:
ԴԵ ԼԱՎ, ԵՍ ԱՆԹԵՐԻ ՉԵՄ:
ԻՐԱԿԱՆՈՒՄ ԱՄԵՆ ԲԱՆ ԱՎԵԼԻ ՎԱՏ Է…
ՄԵՂՔԸ ՊԱՐԶԱՊԵՍ ԱՅՆ ՉԷ, ԵՐԲ ԱՆՈՒՄ ԵՍ ԱՅՆ, ԻՆՉ ՉՊԵՏՔ Է ԱՆԵՍ: ԱՅԼ ՆԱԵՎ **ՉԱՆԵԼՆ Է** ԱՅՆ, ԻՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵԼ:
«ՈՎ ԲԱՐԻՆ ԻՄԱՆԱ ԵՎ ՉԱՆԻ, ՆԱ ՄԵՂԱՆՉՈՒՄ Է»: (ՀԱԿՈԲՈՍ 4:17)
ԱՍԵՄ ԱՎԵԼԻՆ:
ԵՆԹԱԴՐԵՆՔ, ՈՐ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՏԵՂԱԴՐԵԼ ՔՈ ՈՒՂՂՈՒՄ ՄԻ ԱՅՆՊԻՍԻ ՍԱՐՔ, ՈՐԸ ՄԵԿ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՁԱՅՆԱԳՐԻ ՔՈ ԲՈԼՈՐ ԾԱԾՈՒԿ ՄՏՔԵՐԸ…
…ԵՎ ՀԵՏՈ ԴՐԱՆՔ ՄԵԾ ԷԿՐԱՆԻՆ ՑՈՒՑԱԴՐԵՆՔ ՔՈ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԻՆ:
ԴԱ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԼԻՆԻ :
«ԱՍՏՎԱԾ ԳԻՏԻ ՍՐՏԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ»: (ՍԱՂՄՈՍ 44:21)
ԼԱՎ… ԲԱՅՑ **ՈՐՈՇ** ՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԵՄԱՏ ԵՍ ՍՈՒՐԲ ԵՄ:
KKK
7ft
ՃԻՇՏ Է: ԲԱՅՑ ՉԱՓԱՆԻՇՆ ԱՍՏԾՈ ՕՐԵՆՔՆ Է, ՈՉ ԹԵ ԱՅԼ ՄԱՐԴԻԿ: